# ՀՖՖ ՄԱՐԶԱԴԱՇՏԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2026 Թ. ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Բովանդակություն

Բովանդակություն ..... 2
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 4
I – Ընդհանուր դրույթները ..... 5
Հոդված 1. Կիրառման շրջանակը ..... 5
Հոդված 2. Կապը ՀՖՖ մրցումների անցկացման կանոնակարգերի հետ ..... 5
Հոդված 3. Դերերն ու պարտականությունները ..... 5
II - Խաղացողների և պաշտոնյաների գոտիները ..... 7
Հոդված 4. Խաղադաշտը ..... 7
Հոդված 5. Նախավարժանքի գոտին ..... 7
Հոդված 6. Դարպասները և պահեստային դարպասները ..... 8
Հոդված 7. Փոխարինողների նստարանները ..... 8
Հոդված 8. Դրոշակակիրները ..... 9
Հոդված 9. Խաղացողների և պաշտոնյաների սենյակները ..... 9
Հոդված 10. Հանդերձարանները ..... 9
Հոդված 11. Պատվիրակի սենյակը ..... 10
Հոդված 12. Առաջին բուժօգնության կետը խաղացողների և պաշտոնյաների համար ..... 11
Հոդված 13. Դոպինգ ստուգման սենյակը ..... 11
Հոդված 14. Ավտոկայանատեղիները ..... 11
Հոդված 15. Լուսավորությունը ..... 11
III - Հանդիսատեսների գոտիները ..... 13
Հոդված 16. Տարողունակությունը ..... 13
Հոդված 17. Տրիբունաները և հանդիսատեսների ենթակառուցվածքը ..... 13
Հոդված 18. Հանրային մուտքերը, ելքերը և շրջանառության ուղիները ..... 14
Հոդված 19. Վթարային լուսավորության համակարգը ..... 14
Հոդված 20. Հանրային ռադիոհանգույցի համակարգը ..... 14
Հոդված 21. Հանդիսատեսների համար նախատեսված սանհանգույցները ..... 15
Հոդված 22. Հանդիսատեսների առաջին բուժօգնության կետը ..... 15
Հոդված 23. Հաշմանդամություն ունեցող հանդիսատեսների համար նախատեսված ենթակառուցվածքները ..... 15
Հոդված 24. Պատվավոր հյուրերի (*VIP*) նստատեղերը և հյուրասիրության տարածքը ..... 15
Հոդված 25. Ավտոկայանատեղիները ..... 16
Հոդված 26. Վերահսկման սենյակը ..... 16
IV – ԶԼՄ գոտիներ ..... 17
Հոդված 27. ԶԼՄ-ների աշխատանքային գոտին ..... 17
Հոդված 28. Լուսանկարիչների աշխատանքային գոտին ..... 17
Հոդված 29. Մամուլի օթյակը ..... 17

Հոդված 30. Տեսախցիկների հարթակները ..... 18
Հոդված 31. Հեռուստատեսային մեկնաբանների դիրքերը ..... 18
Հոդված 32. Հեռուստատեսային տաղավարները ..... 19
Հոդված 33. Ֆլեշ հարցազրույցի դիրքերը ..... 19
Հոդված 34. Հեռուստատեսային համալիրը ..... 20
Հոդված 35. Մամուլի ասուլիսների սենյակը ..... 20
Հոդված 36. Խառը գոտին ..... 21
V - Եզրափակիչ դրույթներ ..... 22
Հոդված 37. Անհամապատասխանությունը ..... 22
Հոդված 38 Հավելվածները ..... 22
Հոդված 39. Կիրառումը ..... 22
Հոդված 40. Ընդունումը, չեղարկումը և ուժի մեջ մտնելը ..... 22
Հավելված Ա - Լուսավորության միջին հզորության հաշվարկը (Հոդվածներ 15.01 և 15.02) ..... 23
Ա.1. Սահմանումները ..... 23
Ա.2. Չափումը ..... 23
Հավելված Բ - Խաղադաշտի կազմակերպում (Հոդված 4.07) ..... 25
Հավելված Գ – Մարզադաշտերի հասանելիության աղյուսակ ..... 26

# ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| **ՀՖՖ** | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն |
| **ՖԻՖԱ** | Ֆուտբոլի միջազգային ասոցիացիաների ֆեդերացիա |
| **ՖԱՄԽ** | Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային խորհուրդ (ԻՖԱԲ) |
| **ՖԿՀ** | Ֆուտբոլի կառավարման համակարգ |
| **Մարզադաշտի վերահսկման սենյակ** | Սենյակ նախատեսված պաշտոնյաների և անձնակազմի անդամների համար, ովքեր պատասխանատու են խաղի անվտանգության և իրավապահ մարմինների հետ կապված բոլոր հարցերի համար |
| **Հանրային ռադիոհանգույցի համակարգ** | Բարձրախոսների էլեկտրոնային համակարգ, որն ունակ է ակնթարթորեն հստակ հաղորդագրություններ փոխանցել բոլոր հանդիսատեսներին |
| **Լուսավորության վթարային համակարգ** | Հոսանքազրկման դեպքում լուսավորության առկայությունն ապահովող համակարգ, ներառյալ բոլոր ելքերն ու տարհանման ուղիները՝ անվտանգության ապահովման և հանդիսատեսին ուղղորդման նպատակով |
| **Պատվավոր հյուրեր (*VIP*)** | Կազմակերպիչների կողմից հանդիպմանը որպես պատվավոր հյուր հրավիրված անձինք |

# I – Ընդհանուր դրույթները

## Հոդված 1. Կիրառման շրջանակը

1.01 Սույն կանոնակարգը կիրառվում է այն դեպքերում, երբ ՀՖՖ մրցումների անցկացման համապատասխան կանոնակարգով նախատեսված է դրա կիրառումը:

1.02 Սույն կանոնակարգը կարգավորում է նվազագույն կառուցվածքային չափանիշները, որոնց պետք է համապատասխանի մարզադաշտը, որպեսզի դասակարգվի (ըստ դասակարգման աճի կարգի) ՀՖՖ-ի 1-ին, 2-րդ, 3-րդ կամ 4-րդ կարգերի: 1-ին կարգի պարագայում որոշ չափանիշներ դասակարգվում են ըստ ենթակարգերի՝ 1գ, 1բ և 1ա: Որքան բարձր է կարգը, այնքան ավելի խիստ են դրա նկատմամբ սահմանված չափանիշները (հոդված 4-ից հոդված 36): Հատուկ կարգերի համար կիրառելի կառուցվածքային չափանիշները ներկայացված են աղյուսակների տեսքով՝ դասակարգված ըստ կարգերի: Առանց աղյուսակների ներկայացված կառուցվածքային չափանիշները վերաբերում են բոլոր կարգերին:

1.03 Սույն կանոնակարգը սահմանում է մարզադաշտերի յուրաքանչյուր կարգի կառուցվածքային չափանիշներին համապատասխանության վերահսկողության պատասխանատվությունը և սահմանում է այն պայմանները, որոնց դեպքում ՀՖՖ վարչակազմը կարող է բացառություններ կիրառել կոնկրետ կառուցվածքային չափանիշի համար:

1.04 Սույն կանոնակարգը չի սահմանափակում մարզադաշտերի նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կիրառումը:

## Հոդված 2. Կապը ՀՖՖ մրցումների անցկացման կանոնակարգերի հետ

2.01 ՀՖՖ մրցումների անցկացման կանոնակարգերի համապատասխան կարգավորումները.

ա. սահմանում են տվյալ մրցումների խաղերի անցկացման համար մարզադաշտի նվազագույն կարգը,

բ. կարող են սահմանել լրացուցիչ և/կամ ավելի խիստ կառուցվածքային չափանիշներ մարզադաշտի պահանջվող կարգի համար՝ ի տարբերություն սույն կանոնակարգում նշվածների:

## Հոդված 3. Դերերն ու պարտականությունները

3.01 ՀՖՖ հովանու ներքո անցկացվող մրցաշարերի յուրաքանչյուր հանդիպման դաշտի տեր ակումբ պարտավոր է.

ա. ստուգել իր մարզադաշտի ենթակառուցվածքներն ու հարմարությունները՝ նախապատրաստելով դրանք ՀՖՖ վարչակազմի պաշտոնական ստուգմանը,

բ. հաստատել ՀՖՖ վարչակազմին, որ մարզադաշտը, ներառյալ դրա տրիբունաներն ու այլ ենթակառուցվածքային տարրերը (արտակարգ լուսավորության համակարգ, առաջին օգնության հարմարություններ, պաշտպանություն հանդիսատեսների կողմից խաղադաշտ ներխուժումից և այլն), պատշաճ ստուգվել են ՀՀ իրավասու պետական մարմինների կողմից, և վերջիններս գրավոր հաստատել են, որ մարզադաշտերը համապատասխանում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված անվտանգության բոլոր պահանջներին,

գ. նշված գրավոր հաստատումները պետք է տրամադրվեն ՀՖՖ վարչակազմին նախապես:

3.02 ՀՖՖ վարչակազմը պատասխանատու է.

ա. ստուգել համապատասխան մարզադաշտերը և լրացնել ՀՖՖ ՖԿՀ-ի առցանց հաշվետվությունը,

**բ.** կայացնել որոշում մարզադաշտերի օգտագործման մասին՝ հիմնվելով վերոհիշյալ ձևերի և հաստատումների, ինչպես նաև ՀՖՖ-ի կողմից հավաքագրված ցանկացած այլ տեղեկատվության հիման վրա: ՀՖՖ վարչակազմի տվյալ որոշումը վերջնական է:

3.03 ՀՖՖ վարչակազմը կարող է ստուգել մարզադաշտերը ցանկացած ժամանակ ՀՖՖ-ի այն մրցումներից առաջ և դրանց ընթացքում, որոնց անցկացման համար օգտագործվում են տվյալ մարզադաշտերը՝ համոզվելու, որ դրանք համապատասխանում են սույն Կանոնակարգով սահմանված կառուցվածքային պահանջներին:

3.04 Առանձնահատուկ դժվարությունների առկայության դեպքում և ակումբի հիմնավորված դիմումի հիման վրա ՀՖՖ վարչակազմը կարող է բացառություն տրամադրել սույն Կանոնակարգով սահմանված առանձին կառուցվածքային պահանջների կիրառման վերաբերյալ՝ հաշվի առնելով գործող ՀՀ օրենսդրության պահանջները կամ այն հանգամանքը, որ այդ պահանջների լիարժեք կատարումը կհանգեցնի ակումբի կողմից տնային հանդիպումները այլ մարզադաշտում անցկացնելու անհրաժեշտությանը: Բացառությունը տրամադրվում է առավելագույնը մեկ մրցաշրջանի ժամկետով: ՀՖՖ վարչակազմի տվյալ որոշումը վերջնական է:

## II - Խաղացողների և պաշտոնյաների գոտիները

### Հոդված 4. Խաղադաշտը

**4.01** Խաղադաշտը պետք է լինի հարթ և համապատասխանի Ֆուտբոլային ասոցիացիաների միջազգային խորհրդի (IFAB) Խաղի Կանոններին: Դաշտի ծածկույթը պետք է լինի կանաչ, իսկ գծանշումները՝ սպիտակ:

**4.02** Խաղադաշտը պետք է ծածկված լինի կամ՝ ամբողջովին բնական խոտածածկով (100% բնական խոտ), կամ ամրապնդված բնական խոտածածկով (հիբրիդ) կամ արհեստական ֆուտբոլային խոտածածկով (100% արհեստական մանրաթելեր):

**4.03** Արհեստական խոտածածկը պետք է.

**ա.** ունենա ՖԻՖԱ-ի անհրաժեշտ հավաստագրում, որը տրվում է միայն այն դեպքում, երբ ծածկույթը ստուգվել է ՖԻՖԱ-ի կողմից հավատարմագրված լաբորատորիայի կողմից և հաստատվել է համապատասխանությունը ՖԻՖԱ-ի գործող ստանդարտներին,

**բ.** համապատասխանի ՀՀ գործող օրենսդրության պահանջներին (առկայության դեպքերում):

**4.04** Մարզադաշտերը պետք է կառուցվեն և սարքավորվեն այնպես, որ խաղադաշտը պիտանի լինի խաղալու համար ՀՖՖ մրցաշրջանի բոլոր խաղային օրերին:

**4.05** Խաղադաշտի մակերեսից 21 մետրից ցածր որևէ առարկայի տեղադրում չի թույլատրվում:

**4.06** Խաղադաշտին անմիջապես հարող տարածքը պետք է ապահով լինի խաղացողների և մրցավարների համար: Խաղադաշտի հարակից գոտիում առկա սարքավորումները և կառուցվածքային տարրերը պետք է տեղադրվեն այնպես, որ վտանգ չներկայացնեն խաղացողների, մարզիչների կամ խաղի պաշտոնյաների համար (համաձայն «Խաղադաշտի կազմակերպում» Հավելված Բ-ի):

**4.07** Բացի այդ, խաղադաշտը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.

| կարգը | երկարությունը | լայնությունը | լրացուցիչ պահանջները |
|---|---|---|---|
| 1գ | 40 մ | 20 մ | |
| 1բ | 50-65 մ | 40-50 մ | |
| 1ա | 70-80 մ | 64-68 մ | |
| 2 - 3 | 100-105 մ | 64-68 մ | Խաղադաշտի վրա չպետք է տեսանելի լինեն այլ գծեր բացի ֆուտբոլային գծանշումներից, ինչպես սահմանված է Ֆուտբոլային ասոցիացիաների միջազգային խորհրդի (IFAB) Խաղի Կանոններում: |
| 4 | 105 մ | 68 մ | |

**4.08** Բնական խոտածածկով խաղադաշտերում խոտի բարձրությունը, որպես կանոն, չպետք է գերազանցի 30 մմ, և ամբողջ խաղադաշտի մակերեսը պետք է կտրատված լինի նույն բարձրությամբ:

### Հոդված 5. Նախավարժանքի գոտին

**5.01** Փոխարինողների նախավարժանքի համար պետք է նախատեսված լինի տարածք՝ եզրային գծի մոտ՝ մրցավարի առաջին օգնականի հետևում: Տվյալ տարածքը պետք է ծածկված լինի բնական խոտով կամ ապահով կերպով ամրացված արհեստական խոտածածկով և՝ նախընտրելի է, որ դրա մակերեսը համապատասխանի խաղադաշտի

մակերեսին: Եթե եզրային գծի մոտ, մրցավարի առաջին օգնականի հետևում, բավարար տարածք առկա չէ, ապա նախավարժանքի գոտին կարող է տեղակայվել դարպասներից մեկի հետևում՝ գովազդային վահանակների հետևում (դրանց առկայության դեպքում):

## Հոդված 6. Դարպասները և պահեստային դարպասները

6.01 Դարպասաձողերը պետք է պատրաստված լինեն ալյումինից կամ նմանատիպ նյութից, լինեն կլոր կամ էլիպսաձև և չներկայացնեն վտանգ խաղացողների համար:

| կարգը | լայնությունը | բարձրությունը | լրացուցիչ պարզաբանումները |
|---|---|---|---|
| 1գ | 3 մ | 2մ | |
| 1բ | 5 մ | 2 մ | |
| 1ա | 7,32 մ | 2,44 մ | **ա)** պետք է համապատասխանեն Ֆուտբոլային սոցիացիաների միջազգային խորհրդի (*IFAB*) Խաղի Կանոններին<br>**բ)** դարպասները պետք է ամուր ամրացված լինեն մակերեսին:<br>**գ)** ոչ մի լրացուցիչ կառուցվածքային տարր կամ ֆիզիկական հենարան չի կարող օգտագործվել ցանցի ներսում կամ դրա անմիջական շրջակայքում, բացի դարպասի ցանցը մակերեսին ամրացնող ձողերից և ցանցի ետևում և դրսում դարպասի ցանցի հենարաններից:<br>**դ)** չեն կարող օգտագործվել շարժական դարպասներ:<br>**ե)** պետք է համապատասխանեն Ֆուտբոլային սոցիացիաների միջազգային խորհրդի (*IFAB*) Խաղի Կանոններին |
| 2 | | | |
| 3 | | | |
| 4 | | | |

6.02 Հիմնական սկզբունքներն են.

**ա.** լայնություն՝ երկու դարպասաձողերի միջև ընկած ներքին հեռավորությունն է,

**բ.** բարձրություն՝ խաչաձողի ներքևի մասից մինչև խոտածածկի մակերեսն է,

**գ.** դարպասաձողերը և խաչաձողը պետք է լինեն սպիտակ, և ունենան միևնույն լայնությունը և խորությունը, որոնք չպետք է գերազանցեն 12 սմ-ը,

**դ.** պահեստային դարպասները պետք է համապատասխանեն նույն սկզբունքներին:

## Հոդված 7. Փոխարինողների նստարանները

7.01 Մարզադաշտերը պետք է ունենան խաղադաշտի մակարդակում և եզրային գծից առնվազն 4 մ հեռավորության վրա տեղադրված փոխարինողների համար նախատեսված երկու ծածկված նստարան: Յուրաքանչյուր նստարանը պետք է ունենա.

| կարգը | յուրաքանչյուր թիմի համար | լրացուցիչ պահանջները |
|---|---|---|
| 1գ | 8-ից 12 նստատեղ | |
| 1բ | 10-ից 14 նստատեղ | |

| կարգը | յուրաքանչյուր թիմի համար | լրացուցիչ պահանջները |
|---|---|---|
| 1ա | | |
| 2 | 14 նստատեղ | Չորրորդ պաշտոնյայի համար պետք է հատկացվի գրասեղանով նստատեղ, որը, նախընտրելի է, լինի ծածկված և տեղակայված թիմերի նստարանների միջև: |
| 3 | 23 նստատեղ | |
| 4 | | |

## Հոդված 8. Դրոշակակիրները

**8.01** Մարզադաշտերը պետք է ունենան դրոշակակիրներ կամ այլ հենարաններ, որոնց վրա կարող են բարձրացվել դրոշները:

| կարգը | պահանջը |
|---|---|
| 1-2 | առնվազն 1 |
| 3-4 | առնվազն 5 |

## Հոդված 9. Խաղացողների և պաշտոնյաների սենյակները

**9.01** Խաղացողների և պաշտոնյաների ստորև թվարկված բոլոր սենյակները պետք է լինեն լավ լուսավորված, օդափոխվող և/կամ ջեռուցվող և ունենան հստակ ցուցանակներ:

## Հոդված 10. Հանդերձարանները

**10.01** Մարզադաշտում յուրաքանչյուր թիմին պետք է հատկացվի հանդերձարան՝ հետևյալ չափանիշներով.

| կարգը | պահանջը | այլ |
|---|---|---|
| 1գ | Առնվազն 1 լվացարան և 1 զուգարանակոնք՝ երկու թիմերի համար: Յուրաքանչյուր հանդերձարանում՝ առնվազն 20 հոգու համար նախատեսված նստատեղեր և հագուստի կախիչներ: | Ցանկալի է մեկական ցնցուղային խցիկ յուրաքանչյուր հանդերձարանում |
| 1բ | Առնվազն 1 լվացարան և 1 զուգարանակոնք՝ երկու թիմերի համար: Յուրաքանչյուր հանդերձարանում՝ առնվազն 22 հոգու համար նախատեսված նստատեղեր և հագուստի կախիչներ: | Ցանկալի է մեկական ցնցուղային խցիկ յուրաքանչյուր հանդերձարանում |
| 1ա | Առնվազն 1 լվացարան և 1 զուգարանակոնք՝ երկու թիմերի համար: Յուրաքանչյուր հանդերձարանում՝ առնվազն 25 հոգու համար նախատեսված նստատեղեր և հագուստի կախիչներ: | Ցանկալի է մեկական ցնցուղային խցիկ յուրաքանչյուր հանդերձարանում |

| կարգը | պահանջը | այլ |
|---|---|---|
| 2 | Յուրաքանչյուր հանդերձարանում՝ առնվազն 1 ցնցուղ, 1 զուգարանակոնք, 1 լվացարան և առնվազն 25 հոգու համար նախատեսված նստատեղեր և հագուստի կախիչներ: | Սանհանգույցը կարող է գտնվել հանդերձարանին կից: |
| 3 և 4 | Յուրաքանչյուր հանդերձարանում՝ առնվազն 5 ցնցուղ, 2 անհատական զուգարանակոնք, առնվազն 25 հոգու համար նախատեսված նստատեղեր, 1 մերսման սեղան, 1 տակտիկական տախտակ և հագուստի կախիչներ կամ կողպվող պահարաններ | անլար ինտերնետ կապ |

10.02 Մարզադաշտերը պետք է ունենան մրցավարների հանդերձարան, որը կհամապատասխանի հետևյալ պահանջներին.

| կարգը | պահանջը | այլ |
|---|---|---|
| 1գ | 1 լվացարան, 1 անհատական զուգարանակոնք, 3 նստատեղեր և հագուստ կախելու հարմարանքներ | Ցանկալի է 1 ցնցուղային խցիկ |
| 1բ | 1 լվացարան, 1 անհատական զուգարանակոնք, 3 նստատեղեր, 1 գրասեղան և հագուստ կախելու հարմարանքներ | Ցանկալի է 1 ցնցուղաին խցիկ |
| 1ա - 2 | 1 լվացարան, 1 անհատական զուգարանակոնք, 5 նստատեղեր, 1 գրասեղան և հագուստ կախելու հարմարանքներ | Ցանկալի է 1 ցնցուղային խցիկ |
| 3 և 4 | 1 ցնցուղ, 1 լվացարան, 1 անհատական զուգարանակոնք, 5 նստատեղ, 1 գրասեղան և հագուստ կախելու հարմարանքներ կամ պահարաններ | անլար ինտերնետ կապ |

10.03 3-րդ և 4-րդ կարգի մարզադաշտերը և՛ թիմերին, և՛ մրցավարներին պետք է ապահովեն ուղիղ, առանձին և անվտանգ անցում հանդերձարաններից դեպի խաղադաշտ:

## Հոդված 11. Պատվիրակի սենյակը

| կարգը | պահանջը | այլ |
|---|---|---|
| 1 և 2 | Կիրառելի չէ | Կիրառելի չէ |
| 3 և 4 | Սենյակ՝ նախատեսված բացառապես ՀՖՖ պատվիրակի և մրցավարների տեսուչի համար՝ թիմերի և մրցավարների հանդերձարաններին հեշտ հասանելիությամբ: | անլար ինտերնետ կապ |

## Հոդված 12. Առաջին բուժօգնության կետը խաղացողների և պաշտոնյաների համար

| կարգը | պահանջը |
|---|---|
| 1-2 | Կիրառելի չէ |
| 3-4 | Մարզադաշտը պետք է ունենա ՀՖՖ Բժշկական դեպարտամենտի պահանջներին համապատասխանող առաջին օգնության բուժկետ: |

## Հոդված 13. Դոպինգ ստուգման սենյակը

| կարգը | պահանջը |
|---|---|
| 1-3 | Կիրառելի չէ |
| 4 | Մարզադաշտը պետք է ունենա դոպինգ ստուգման սենյակ՝ ՈՒԵՖԱ-ի գործող հակադոպինգային կանոնակարգի պահանջներին համապատասխան: |

## Հոդված 14. Ավտոկայանատեղիները

**14.01** Թիմերին և պաշտոնատար անձանց պետք է հատկացվեն կայանատեղեր.

| կարգը | պահանջը | այլ |
|---|---|---|
| 1 և 2 | առնվազն 4 տրանսպորտային միջոց | — |
| 3 և 4 | առնվազն 2 ավտոբուս և 10 տրանսպորտային միջոց | այս կայանատեղերը պետք է տեղակայվեն խաղացողների և պաշտոնյաների մուտքի մոտ՝ ապահով տարածքում: |

**14.02** Եթե նման կայանատեղին չի գտնվում խաղացողների և պաշտոնյաների մուտքի անմիջական հարևանությամբ, ապա պետք է կազմակերպվի անվտանգ գոտի ուղևորների իջեցման և մուտքի համար:

## Հոդված 15. Լուսավորությունը

**15.01** Արհեստական լուսավորության ներքո անցկացվող խաղերի համար մարզադաշտը պետք է համալրված լինի լուսավորության համակարգով, որն ապահովում է 350 Էհ(յուքսից) ոչ պակաս միջին հորիզոնական լուսավորություն՝ չափված համաձայն Հավելված Ա-ի:

**15.02** Հեռարձակվող խաղերի համար մարզադաշտը պետք է համալրված լինի լուսավորության համակարգով, որն ապահովում է ստորև բերված աղյուսակի առնվազն միջին լուսավորությունը՝ չափված՝ համաձայն Հավելված Ա-ի.

| կարգը | հորիզոնական լուսավորությունը | ուղղահայաց լուսավորությունը |
|---|---|---|
| 1 և 2 | 800 Էհ(յուքս) U1h >0.4 և U2h >0.5 միատեսակության հարաբերակցությամբ | 350 Էհ(յուքս) հաշվարկի յուրաքանչյուր հարթության վրա՝ U1h >0.35 և U2h >0.45 միատեսակության հարաբերակցությամբ |

| կարգը | հորիզոնական լուսավորությունը | ուղղահայաց լուսավորությունը |
|---|---|---|
| 3 | 1.200 Էհ(լյուքս) U1h >0.4 և U2h >0.6 միատեսակության հարաբերակցությամբ | 750 Էհ(լյուքս) հաշվարկի յուրաքանչյուր հարթության վրա՝ U1h >0.4 և U2h >0.45 միատեսակության հարաբերակցությամբ |
| 4 | 1.400 Էհ(լյուքս) U1h >0.5 և U2h >0.7 միատեսակության հարաբերակցությամբ | 1.000 Էհ(լյուքս) հաշվարկի յուրաքանչյուր հարթության վրա՝ U1h >0.4 և U2h >0.5 միատեսակության հարաբերակցությամբ |

**15.03** Բացի այդ, որպեսզի խաղը շարունակվի նույնիսկ հոսանքազրկման դեպքում, պետք է ապահովվի էլեկտրամատակարարման անկախ աղբյուր, որը կապահովի առնվազն հետևյալ միջին հորիզոնական լուսավորությունը.

| կարգը | լուսավորության ներքո անցկացվող խաղերը | հեռարձակվող խաղերը |
|---|---|---|
| 1 | կիրառելի չէ | կիրառելի չէ |
| 2 | 350 Էհ(լյուքս) | 350 Էհ(լյուքս) |
| 3 | | 800 Էհ(լյուքս) |
| 4 | | 900 Էհ(լյուքս), էլեկտրամատակարարման անջատումից ոչ ավել, քան 15 րոպե հետո |

## III - Հանդիսատեսների գոտիները

### Հոդված 16. Տարողունակությունը

**16.01** Մարզադաշտերը պետք է ունենան հետևյալ նվազագույն տարողունակությունը (ներառյալ բոլոր ընդհանուր և պատվավոր հյուրերի (VIP) նստատեղերը).

| կարգը | տարողունակությունը |
|---|---|
| 1գ | 5 – 50 հանդիսատես՝ կանգնած տեղավորում |
| 1բ | 10 – 70 հանդիսատես՝ կանգնած տեղավորում |
| 1 ա | 20 – 100 հանդիսատես՝ կանգնած տեղավորում կամ 20 – 50 նստատեղ |
| 2 | 20 – 50 նստատեղ |
| 3 | 200 – 500 նստատեղ |
| 4 | 1000 նստատեղ |

**16.02** Մարզադաշտի ընդհանուր տարողունակության առնվազն 10%-ը պետք է հատկացվի մարզադաշտի առանձնացված հատվածում՝ հյուր թիմի երկրպագուների տեղավորման համար:

### Հոդված 17. Տրիբունաները և հանդիսատեսների ենթակառուցվածքը

**17.01** Հանդիսատեսների նստատեղերը պետք է լինեն անհատական, համարակալված, ամուր ամրացված, պատրաստված չկոտրվող և ոչ դյուրավառ նյութից և ունենան առնվազն 30 սմ բարձրությամբ թիկնակ՝ չափված նստատեղի մակերեսից:

**17.02** Տրիբունաները պետք է ապահով կերպով ամրացված լինեն կրող հիմքի վրա և չպետք է հիմնված լինեն որևէ գլանաձև առարկաների/կաղապարային կառույցների վրա կամ պարունակել դրանք իրենց կառուցվածքում: Տրիբունաների նյութերը, դիզայնը և կառուցվածքը պետք է հստակորեն նախատեսված լինեն մշտական օգտագործման համար:

**17.03** Կանգնելու տեղերի, տեռասների, հարթակների, նստարանների և առանց թիկնակների նստատեղերի առկայությունը թույլատրվում է/արգելվում է.

| կարգը | պահանջը |
|---|---|
| 1-2 | Թույլատրվում են, եթե դրանց ապահովությունն ու անվտանգ տարողունակությունը գնահատվել և հաստատվել են ՀՀ իրավասու պետական մարմինների կողմից: |
| 3-4 | Արգելվում են: |

**17.04** Մարզադաշտի յուրաքանչյուր հատվածում պետք է նախատեսված լինեն սննդի կետեր բոլոր հանդիսատեսների համար:

**17.05** Մարզադաշտերը պետք է լինեն բարվոք վիճակում՝ բոլոր հանրային տարածքներում լավ լուսավորությամբ: Այնտեղ չպետք է լինեն շինանյութերի բեկորներ (օրինակ, քարեր, ցեմենտ և այլն), որոնք կարող են վտանգ ներկայացնել նետվելու կամ այլ կերպ օգտագործվելու դեպքում:

## Հոդված 18. Հանրային մուտքերը, ելքերը և շրջանառության ուղիները

**18.01** Մարզադաշտին մոտեցման երթուղիները, մուտքերը, ելքերը և մարզադաշտի բոլոր հանրային տարածքները պետք է հստակ նշվեն ցուցանակներով (օրինակ՝ տառերով կամ թվերով), որպեսզի հանդիսատեսները կարողանան հեշտությամբ գտնել իրենց նստատեղերը, իսկ այնուհետև՝ ելքերը:

**18.02** Մուտքի դարպասները և/կամ պտուտակադռնակները պետք է նախագծվեն այնպես, որ այնտեղ չառաջանան խցանումներ և հանդիսատեսների հոսքը լինի անխափան:

**18.03** Արգելված իրերի նշումով մարզադաշտի հիմնական կանոնները պետք է փակցվեն յուրաքանչյուր մուտքի մոտ, գերադասելի է՝ միջազգայնորեն ճանաչված պատկերագրերի տեսքով:

**18.04** Բոլոր հանրային մուտքերը, ելքերը և երթուղիները պետք է հստակ տարբերվեն նստատեղերի գոտիներից: Մուտքի դարպասները, ելքի դարպասները և դռները պետք է լինեն գործող և նշված լինեն համընդհանուր հասկանալի նշաններով:

**18.05** Տարհանման ուղիների մաս կազմող բոլոր դռները և դարպասները, ինչպես նաև հանրային տարածքներից դեպի խաղադաշտ տանող բոլոր դարպասները (կիրառելի դեպքերում) պետք է.

**ա.** լինեն գործող և նախագծված այնպես, որ մարզադաշտում հանդիսատեսների առկայության ժամանակ դրանք փակված չլինեն (բայց լինեն հսկողության տակ),

**բ.** բացվեն դեպի դուրս՝ ելքի կամ տարհանման երթուղու ուղղությամբ:

## Հոդված 19. Վթարային լուսավորության համակարգը

| կարգը | |
|---|---|
| 1-2 | Կիրառելի չէ |
| 3-4 | Ընդհանուր լուսավորության խափանման պարագայում անվտանգության ապահովման և հանդիսատեսներին և աշխատակիցներին ուղղորդելու նպատակով մարզադաշտերը պետք է ունենան ՀՀ համապատասխան մարմինների կողմից հաստատված արտակարգ լուսավորության համակարգ, որն ընդգրկում է մարզադաշտի բոլոր տարածքները՝ ներառյալ ելքի և տարհանման ուղիները: |

## Հոդված 20. Հանրային ռադիոհանգույցի համակարգը

| կարգը | |
|---|---|
| 1-2 | Կիրառելի չէ |
| 3-4 | **20.01** Մարզադաշտերը պետք է համալրված լինեն էլեկտրոնային բարձրախոսների համակարգով՝ մարզադաշտի բոլոր հատվածներում ձայնային հաղորդագրությունների ակնթարթային փոխանցման համար: |

| կարգը | |
|---|---|
| | **20.02** Հանրային ռադիոհանգույցի համակարգը պետք է լսելի լինի ինչպես մարզադաշտի ներսում, այնպես էլ դրսում: Համակարգը պետք է միացված լինի անկախ էլեկտրամատակարարման աղբյուրի: |

## Հոդված 21. Հանդիսատեսների համար նախատեսված սանհանգույցները

**21.01** Բավարար թվով մաքուր և հիգիենիկ սանհանգույցներ պետք է հավասարաչափ բաշխված լինեն բոլոր սեկտորներում՝ տղամարդկանց և կանանց 80:20 հարաբերակցությամբ: Զուգարանակոնքերը և միզարանները պետք է ապահովված լինեն ջրահեռացման համակարգով: Սանհանգույցները պետք է ունենան լավ ամրացված լվացարաններ և զուգարանի թղթի ու օճառի բեռնարկղեր:

**21.02** Սանիտարական հանգույցների նվազագույն պահանջներն են.

**ա.** 1 զուգարանակոնք՝ յուրաքանչյուր 250 տղամարդու համար,

**բ.** 1 միզարան՝ յուրաքանչյուր 125 տղամարդու համար,

**գ.** 1 զուգարանակոնք՝ յուրաքանչյուր 125 կնոջ համար:

## Հոդված 22. Հանդիսատեսների առաջին բուժօգնության կետը

| կարգը | |
|---|---|
| 1-2 | Կիրառելի չէ |
| 3-4 | **22.01** Լիարժեք սարքավորված և ՀՀ իրավասու մարմինների կողմից հաստատված առաջին բուժօգնության առնվազն մեկ կետ պետք է հասանելի լինի հանդիսատեսների համար:<br>**22.02** Նման կետը և դեպի այն տանող երթուղիները պետք է հստակ գծանշված լինեն ցուցանակներով: |

## Հոդված 23. Հաշմանդամություն ունեցող հանդիսատեսների համար նախատեսված ենթակառուցվածքները

**23.01** Մարզադաշտերը պետք է ունենան մուտքի, ելքի ուղիներ և նստատեղեր՝ նախատեսված հաշմանդամություն ունեցող հանդիսատեսների և նրանց ուղեկցողների համար: Բոլոր նման վայրերը պետք է ապահովեն խաղադաշտի անխոչընդոտ տեսանելիություն:

**23.02** Հաշմանդամություն ունեցող հանդիսատեսներին հատկացված յուրաքանչյուր սեկտորում պետք է լինեն նրանց կարիքներին հարմարեցված առնվազն 1 հատուկ զուգարան և սննդի կետ:

## Հոդված 24. Պատվավոր հյուրերի (*VIP*) նստատեղերը և հյուրասիրության տարածքը

**24.01** Մարզադաշտերում պետք է առկա լինեն հետևյալ նվազագույն թվով պատվավոր հյուրերի (VIP) նստատեղեր.

| կարգը | |
|---|---|
| 1 և 2 | կիրառելի չէ |

| կարգը | |
|---|---|
| 3 | 10 |
| 4 | 25 |

**24.02** Պատվավոր հյուրերի (*VIP*) նստատեղերը պետք է գտնվեն ծածկի տակ և տեղակայված լինեն հիմնական տրիբունայում, տուգանային հրապարակների միջև ընկած հատվածում՝ հնարավորինս մոտ դաշտի կենտրոնական գծին:

**24.03** Մարզադաշտերը պետք է ունենան պատվավոր հյուրերի (*VIP*) համար նախատեսված հյուրընկալության տարածք՝ դեպի պատվավոր հյուրերի (*VIP*) նստատեղեր ուղիղ մուտքով:

## Հոդված 25. Ավտոկայանատեղիները

**25.01** Մարզադաշտի առանձին և ապահով տարածքում պետք է առկա լինեն հետևյալ նվազագույն թվով կայանատեղիները պատվավոր հյուրերի (*VIP*), այլ հյուրերի և անձնակազմի համար.

| կարգը | |
|---|---|
| 1 և 2 | Կիրառելի չէ |
| 3 | 20 |
| 4 | 30 |

## Հոդված 26. Վերահսկման սենյակը

**26.01** Մարզադաշտերը վերահսկման սենյակի մասով պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին.

| կարգը | հիմնական հարմարությունները | լրացուցիչ պահանջները |
|---|---|---|
| 1 և 2 | Կիրառելի չէ | կիրառելի չէ |
| 3 | Վերահսկման սենյակ, որն ապահովում է մարզադաշտի ներսի ընդհանուր տեսանելիությունը և համալրված է ռադիոհաղորդակցմամբ, որն ապահովում է կապը աշխատակիցների և մարզադաշտում ապահովության և անվտանգության համար պատասխանատու աշխատակիցների միջև: | |
| 4 | | |

## IV – ԶԼՄ գոտիներ

### Հոդված 27. ԶԼՄ-ների աշխատանքային գոտին

**27.01** Մարզադաշտերը պետք է ունենան առնվազն մեկ սենյակ՝ գրասեղաններով, էլեկտրամատակարարմամբ եւ ինտերնետ կապով՝ որպես ԶԼՄ ներկայացուցիչների աշխատանքային գոտի օգտագործելու համար:

**27.02** ԶԼՄ-ների աշխատանքային գոտին պետք է ապահովի հետևյալ նվազագույն քանակությամբ աշխատանքային տեղերը.

| կարգը | նվազագույն քանակը |
|---|---|
| 1 և 2 | կիրառելի չէ |
| 3 | 5 |
| 4 | 10 |

### Հոդված 28. Լուսանկարիչների աշխատանքային գոտին

**28.01** Լուսանկարիչների աշխատանքային գոտին պետք է ապահովի աշխատանքային տեղերի հետևյալ նվազագույն քանակն ու բավարարի հետևյալ լրացուցիչ պահանջներին.

| կարգը | նվազագույն քանակը | լրացուցիչ պահանջները |
|---|---|---|
| 1-3 | կիրառելի չէ | կիրառելի չէ |
| 4 | 5 | Լուսանկարիչների աշխատանքային գոտին պետք է պարունակի գրասեղաններ, աթոռներ, էլեկտրական վարդակներ և ինտերնետ կապ, ինչպես նաև ունենա հեշտ ելք դեպի խաղադաշտ: Այն կարող է լինել ԶԼՄ-ների ընդհանուր աշխատանքային գոտու առանձնացված մաս: Սակայն նախընտրելի է, որ դա լինի առանձին սենյակ: |

### Հոդված 29. Մամուլի օթյակը

**29.01** Մարզադաշտերում պետք է նախատեսվեն մամուլի և ռադիոհաղորդավարների համար առանձնացված տեղեր: Դրանք պետք է լինեն ծածկի տակ և տեղակայված լինեն հիմնական տրիբունայի կենտրոնական հատվածում՝ դաշտի և նրա անմիջական շրջակայքի անարգել տեսանելիությամբ, ինչպես նաև՝ մամուլի մյուս գոտիներին հեշտ հասանելիությամբ:

**29.02** Բացի այդ, մարզադաշտերը պետք է բավարարեն ծածկի տակ գտնվող մամուլի համար նախատեսված նստատեղերի վերաբերյալ հետևյալ պահանջները.

| կարգը | ընդհանուր նվազագույն քանակը | գրասեղաններով նստատեղերի նվազագույն քանակը |
|---|---|---|
| 1 և 2 | կիրառելի չէ | կիրառելի չէ |
| 3 | 10 | 5 |

| կարգը | ընդհանուր նվազագույն քանակը | գրասեղաններով նստատեղերի նվազագույն քանակը |
|---|---|---|
| 4 | 20 | 10 |

**29.03** Յուրաքանչյուր գրասեղան պետք է լինի բավականաչափ մեծ՝ անհատական համակարգիչը (նոթբուք) տեղավորելու համար և պետք է ունենա էլեկտրամատակարարում և անլար ինտերնետ կապ:

## Հոդված 30. Տեսախցիկների հարթակները

**30.01** Մարզադաշտում պետք է առկա լինի մեկ հիմնական տեսախցիկի հարթակ, որը պետք է տեղակայված լինի հիմնական կամ դիմացի տրիբունայում:

**30.02** Հիմնական տեսախցիկի հարթակը պետք է լինի ծածկված, տեղակայված կենտրոնական գծի ճիշտ երկայնքով և դաշտի նկատմամբ այնպիսի բարձրության վրա, ինչը կապահովի խաղադաշտի և նրա անմիջական շրջակայքի ամբողջական և անարգել տեսանելիությունը: Հարթակի հիմքը պետք է լինի հարթ, ամուր և չտատանվող:

**30.03** Բացի այդ, հիմնական տեսախցիկի հարթակը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.

| կարգը | |
|---|---|
| 1-2 | Կիրառելի չէ |
| 3-4 | Առնվազն 3 մ լայնությամբ x 3 մ երկարությամբ, արևին հակառակ տեղակայված տրիբունայում առնվազն երեք տեսախցիկ տեղավորելու համար: |

**30.04** Տեսախցիկների լրացուցիչ հարթակները պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին.

| կարգը | | |
|---|---|---|
| 1-2 | Կիրառելի չէ | կիրառելի չէ |
| 3 | Երկու 16 մ տեսախցիկների հարթակներ, յուրաքանչյուրն առնվազն 2 մ լայնությամբ և 2 մ երկարությամբ՝ նախատեսված մեկ տեսախցիկի համար, որոնք պետք է տեղակայվեն հիմնական տրիբունայում՝ ճիշտ 16 մ գծերի վրա՝ հիմնական տեսախցիկի հարթակի բարձրությանը կամ ավելի բարձր: | կիրառելի չէ |
| 4 | | Դիմացի տրիբունայի կենտրոնական հատվածում գտնվող, առնվազն մեկ տեսախցիկի համար նախատեսված, մեկ հակառակ անկյան տեսախցիկի հարթակ և առնվազն 2 մ լայնությամբ և 2 մ երկարությամբ, յուրաքանչյուր դարպասի հետևի տրիբունայում տեղակայված մեկ այլ տեսախցիկի հարթակ, որի բարձրությունը պետք է բավարար լինի ապահովելու անխափան տեսանելիություն 11 մետրանոց նշագծից վեր՝ ուղահայաց դարպասածողից բարձր: |

## Հոդված 31. Հեռուստատեսային մեկնաբանների դիրքերը

**31.01** Մարզադաշտերը պետք է ունենան հետևյալ նվազագույն թվով հեռուստատեսային մեկնաբանների դիրքեր.

| կարգը | |
|---|---|
| 1-3 | կիրառելի չէ |
| 4 | 3 |

**31.02** Հեռուստատեսային մեկնաբանների դիրքերը պետք է լինեն ծածկված և տեղակայված հիմնական տեսախցիկի հարթակի նույն տրիբունայի կենտրոնական հատվածում՝ երկու 16 մ գծերի միջև: Նրանք պետք է ունենան ողջ խաղադաշտի և նրա անմիջական շրջակայքի անարգել տեսանելիություն, հեշտ հասանելիություն ԶԼՄ այլ գոտիներ և լինեն ապահով ու հասանելի բացառապես հավաստագրված անձանց համար: Նստատեղերի հետևում պետք է լինի բավարար տարածք, որպեսզի մյուս մեկնաբանները կարողանան անարգել շարժվել դեպի իրենց դիրքերը:

**31.03** Յուրաքանչյուր մեկնաբանական դիրք պետք է ապահովված լինի առնվազն 180 սմ լայնությամբ գրասեղանով, առնվազն երեք աթոռով, հեռախոսալարով, էլեկտրամատակարարմամբ, լուսավորությամբ և անլար ինտերնետ կապով:

## Հոդված 32. Հեռուստատեսային տաղավարները

**32.01** Մարզադաշտերը պետք է ունենան հետևյալ պահանջներին համապատասխանող սենյակներ, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են օգտագործվել որպես հեռուստատեսային տաղավար.

| կարգը | նվազագույն քանակը | նվազագույն չափը | լրացուցիչ պահանջները |
|---|---|---|---|
| 1-3 | կիրառելի չէ | կիրառելի չէ | կիրառելի չէ |
| 4 | 2 սենյակ | 5 մ երկարություն x 5 մ լայնություն x 2,5 մ բարձրություն | Երկու հեռուստատեսային տաղավարներից առնվազն մեկը պետք է լինի խաղադաշտի տեսարանով՝ ապահովելով դրա անխոչընդոտ տեսանելիությունը: |

## Հոդված 33. Ֆլեշ հարցազրույցի դիրքերը

**33.01** Մարզադաշտերը պետք է ապահովված լինեն խաղադաշտի և հանդերձարանների միջև ընկած տարածքով, որը կարող է օգտագործվել ֆլեշ հարցազրույցների համար, որտեղ կարող են անցկացվել ուղիղ հեռուստատեսային և ռադիո հարցազրույցներ:

**33.02** Բացի այդ, ֆլեշ հարցազրույցների համար նախատեսված տարածքը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.

| կարգը | |
|---|---|
| 1 և 2 | Կիրառելի չէ |
| 3 և 4 | Բավականաչափ մեծ՝ առնվազն երկու դիրք տեղավորելու համար՝ յուրաքանչյուրը 4 մ երկարությամբ x 3 մ լայնությամբ: |

## Հոդված 34. Հեռուստատեսային համալիրը

**34.01** Մարզադաշտերը պետք է ունենան անվտանգ գոտի, որը կարող է օգտագործվել հեռուստաընկերությունների շարժական մեքենաների կայանման համար: Տարածքը պետք է լինի առնվազն հետևյալ չափսերի.

| կարգը | |
|---|---|
| 1-3 | կիրառելի չէ |
| 4 | 100 ք.մ |

**34.02** Տարածքը պետք է.

**ա.** տեղակայված լինի մարզադաշտի հարևանությամբ, նախընտրելի է՝ հիմնական տեսախցիկի հարթակի կողմում և ապահովված լինի էլեկտրամատակարարմամբ,

**բ.** ապահովի ամուր և հարթ կայանատեղի մեծ և ծանր տրանսպորտային միջոցների համար (օրինակ. 43 տոննա բեռնատարներ),

**գ.** ունենա բավարար ջրահեռացում, որպեսզի որևէ մալուխ, սարքավորում կամ տրանսպորտային միջոց չլինի ջրային կուտակումների հետ շփման վտանգի տակ,

**դ.** զերծ լինի որևէ խոչընդոտից, ինչպիսիք են ծառերը, շենքերը և եզրաքարերը, և ապահովի արտակարգ ծառայությունների մեքենաների անարգել ելումուտը,

**ե.** կա՛մ ապահովի հարավ-արևմտյանից դեպի հարավ-արևելյան հորիզոն պարզ, անխոչընդոտ տեսադաշտ, կա՛մ գտնվի ազդանշանը հեռուստաարբանյակ ուղարկելու առանձին տարածքից 50 մ հեռավորության վրա (չափված տարածքի եզրից):

## Հոդված 35. Մամուլի ասուլիսների սենյակը

**35.01** Մարզադաշտերի մամուլի ասուլիսների սենյակները պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին.

| կարգը | վայրը և հարմարությունները | նվազագույն քանակը |
|---|---|---|
| 1 և 2 | Կիրառելի չէ | կիրառելի չէ |
| 3 | Մարզադաշտի ներսում պետք է առկա լինի մամուլի ասուլիսների սենյակ: Այն կարող է լինել ՁԼՄ-ների աշխատանքային տարածքի մաս և պետք է կահավորված լինի գրասեղաններով և աթոռներով: | 5 |
| 4 | Մարզադաշտի ներսում պետք է առկա լինի մամուլի ասուլիսների սենյակ: Այն կարող է լինել ՁԼՄ-ների աշխատանքային տարածքի մաս և պետք է կահավորված լինի գրասեղանով և ամբիոնով, տեսախցիկի հարթակով, որը բավականաչափ մեծ է առնվազն 2 տեսախցիկ տեղավորելու համար, ձայնային համակարգով (խոսափողներ, բարձրախոսներ և ձայնաբաժանիչ սարք (splitbox)՝ նվազագույնը 4 մուտքերով) և հեռարձակման լուսավորություն: | 20 |

## Հոդված 36. Խառը գոտին

36.01 Հանդերձարանների և թիմային ավտոբուսների գոտու միջև մարզադաշտերը պետք է ունենան տարածք, որը կարող է վերածվել խառը գոտու, որտեղ հավատարմագրված ԶԼՄ-ների ներկայացուցիչները կարող են խաղից հետո հարցազրույց վերցնել խաղացողներից:

36.02 Խառը գոտին պետք է համապատասխանի նաև հետևյալ պահանջներին.

| կարգը | |
|---|---|
| 1-3 | Կիրառելի չէ |
| 4 | Այն պետք է լինի ծածկի տակ և բավականաչափ մեծ՝ ԶԼՄ առնվազն 10 ներկայացուցիչներ տեղավորելու համար: |

## V - Եզրափակիչ դրույթներ

### Հոդված 37. Անհամապատասխանությունը

**37.01** Սույն կանոնակարգի ցանկացած խախտում կարող է առաջացնել պատասխանատվության միջոցի կիրառում՝ համաձայն ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի:

### Հոդված 38 Հավելվածները

**38.01** Սույն կանոնակարգի բոլոր հավելվածները կազմում են դրա անբաժանելի մասը:

### Հոդված 39. Կիրառումը

**39.01** ՀՖՖ վարչակազմն իրավասու է մշակել և ընդունել լրացուցիչ ուղեցույցեր, հրահանգներ, ձեռնարկներ, առաջարկություններ կամ այլ միջոցներ՝ աջակցելու սույն կանոնակարգի իրականացմանը:

**39.02** Ակումբները նման փաստաթղթերի հաստատման մասին տեղեկացվում են պաշտոնական գրությունների, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ուղարկված գրությունների, միջոցով:

### Հոդված 40. Ընդունումը, չեղարկումը և ուժի մեջ մտնելը

**40.01** Սույն կանոնակարգն ընդունվել է ՀՖՖ Գործադիր կոմիտեի կողմից՝ 2026 թ. հոկտեմբերի 30-ին կայացած նիստում:

**40.02** Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում 2027 թ-ի հունվարի 1-ից, բացառությամբ հոդված 4.03-ի, որն ուժի մեջ է մտնում 2030 թ-ի հունվարի 1-ից:

**40.03** Սույն կանոնակարգը փոխարինում է ՀՖՖ ենթակառուցվածքային կանոնակարգին (2021թ. խմբագրություն):

# Հավելված Ա - Լուսավորության միջին հզորության հաշվարկը (Հոդվածներ 15.01 և 15.02)

## Ա.1. Սահմանումները

| Հորիզոնական լուսավորությունը | Լուսավորություն, որն ընկնում է հորիզոնական հարթության վրա, խաղային մակերեսից 1 մ բարձրության վրա և դրան զուգահեռ: |
|---|---|
| Ուղղահայաց լուսավորությունը | Լուսավորություն, որը ընկնում է ուղղահայաց հարթության վրա, խաղային մակերեսից 1 մ բարձրության վրա և դրան ուղղահայաց: |
| Հավասարաչափությունը | Լուսավորության հավասարաչափությունը բնորոշում է լույսի բաշխման հավասարաչափությունը տվյալ հարթության վրա: Լուսավորության հավասարաչափությունը արտահայտվում է լուսավորության երկու հարաբերությամբ՝ *U1* և *U2*: |
| *U1* | Լուսավորության ողջ տիրույթը՝ նվազագույնից մինչև առավելագույնը, որին ենթարկվում է մարդը կամ տեսախցիկը: *U1* արժեքը նպաստում է տեսողական արդյունավետությանը: |
| *U2* | Մարդու նորմալ հարմարեցված ազդեցության և տվյալ հարթության ամենացածր լուսավորության միջև: *U2* արժեքը նպաստում է տեսողական հարմարավետությանը: |
| Լյուքսը (*Lux*) | Խաղադաշտի մակերեսի վրա ընկնող լուսավորության միավորը (*1lx = 1lm/m2*): |
| *E* | Մակերեսի որոշակի կետի վրա ընկնող և լյուքսով չափվող լույսի քանակը: |

## Ա.2. Չափումը

**Ա.2.1** Չափման սարքավորումները. Լուսավորության չափման համար օգտագործվող լուսավորության հաշվիչը պետք է համապատասխանի լուսավորված միջավայրի համար և ունենա լայն անկյունով զգայուն լուսային սենսոր:

**Ա.2.2** Չափման ընթացակարգը. Խաղադաշտը բաժանվում է 96 կետ պարունակող ցանցի: Յուրաքանչյուր կետում իրականացվում են լուսավորության չափում՝ հորիզոնական լուսավորություն՝ մեկ անկյան տակ և ուղղահայաց լուսավորություն՝ չորս տարբեր անկյուններով:

Այսպիսով, չափման ընթացակարգը պահանջում է ընդհանուր առմամբ 480 լուսավորության չափում: Լուսավորության հաշվիչը միշտ պետք է տեղադրվի տվյալ չափման համար նախատեսված ճիշտ անկյան տակ: Չափումներն իրականացնող անձնակազմը չպետք է ստեղծի ստվերներ, որոնք կարող են ազդել չափումների արդյունքների վրա: Հաշվիչը պետք է լինի խաղադաշտի մակերեսից 1 մ բարձրության վրա: Ցանցի յուրաքանչյուր կետի լուսավորության ցուցանիշը պետք է գրանցվի համապատասխան լուսավորության ցանցի պլանում:

**Ա.2.3** Հորիզոնական չափումը. ցանցի յուրաքանչյուր կետում հաշվիչը տեղադրվում է դեպի վեր, խաղային մակերեսից 1 մ բարձրության վրա և խաղադաշտին զուգահեռ

**Ա.2.4** Ուղղահայաց չափումը. ցանցի յուրաքանչյուր կետում հաշվիչը տեղադրվում է խաղադաշտին ուղղահայաց, խաղային մակերեսից 1 մ բարձրության վրա: Այնուհետև հաշվիչը պետք է կարգավորվի չափման չորս դիրքերից


յուրաքանչյուրի համար: Չափման դիրքերը նշված են ուղղահայաց լուսավորության ցանցի պլանում և գտնվում են 0°, 90°, 180° և 270° տակ: Այս ընթացակարգը պետք է կրկնվի բոլոր 96 ցանցային կետերում:

Ա.2.5 Հավասարաչափության գործակիցները հաշվարկվում են հետևյալ կերպ.

*U1. E min/E max*

*U2. E min/E med*

## Հավելված Բ - Խաղադաշտի կազմակերպում (Հոդված 4.07)




- Նվազագույն հեռավորությունը կառուցվածքային տարրերից և խաղադաշտի եզրին տեղադրված անշարժ սարքավորումներից, ներառյալ գովազդային վահանակները:
- Նվազագույն հեռավորությունը թիմերի պահեստայինների նստարաններից:
- Կառուցվածքային տարրերից առաջարկվող նվազագույն հեռավորությունը՝ խաղադաշտի եզրին տեղադրված անշարժ սարքավորումների և դրանց շահագործման համար անհրաժեշտ տարածքն ապահովելու նպատակով, ներառյալ գովազդային վահանակները:

## Հավելված Գ – Մարզադաշտերի հասանելիության աղյուսակ

| ՄՐՑԱՇԱՐ | ՓՈՒԼ | ՄԱՐԶԱԴԱՇՏԵՐԻ ԿԱՐԳԵՐ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1գ | 1բ | 1ա | 2 | 3 | 4 |
| Մ-10 տ. տղաներ | բոլոր | ■ | | | | | |
| Մ-11 տ. աղջիկներ | բոլոր | ■ | | | | | |
| Մ-11 տ. տղաներ | բոլոր | | ■ | | | | |
| Մ-12 տ. տղաներ | բոլոր | | ■ | | | | |
| Մ-13 տ. աղջիկներ | բոլոր | | ■ | | | | |
| Մ-13 տ. տղաներ | բոլոր | | | ■ | | | |
| Մ-14-18 տ. տղաներ | բոլոր | | | | ■ | ■ | ■ |
| Մ-15 և բարձր տ. աղջիկներ | բոլոր | | | | ■ | ■ | ■ |
| Սիրողական | բոլոր | | | | ■ | ■ | ■ |
| 2-րդ լիգա | բոլոր | | | | ■ | ■ | ■ |
| Առաջին Խումբ | բոլոր | | | | | ■ | ■ |
| Գավաթի խաղարկություն | նախնական | | | | | ■ | ■ |
| Գավաթի խաղարկություն | բոլոր | | | | | | ■ |
| Սուպերգավաթ | բոլոր | | | | | | ■ |
| Պրեմիեր Լիգա | բոլոր | | | | | | ■ |